

ԱՐԻՒՆԷԼԱԳԵՏՆԵՐԻ XIV ՄԻՋԱԶԳՍԹԻՆ ԿՕՆԴՐԷՍՈՐ

Ապրիլ 19-20ին Ալեքսիայի մայրաքաղաք Ալեքսրում կայացաւ Արեւելագէտների XIV միջազգային կոնգրէսը, որին կը մասնակցէին մօտ 600 դիտնականներ եւ արեւելագէտներ, եկած երկրագնդի զանազան ծայրերից :

Կոնգրէսը դրված էր Ալեքսիայի ընդհանուր կառավարիչ (gouverneur général) պատգամաւոր ժողովի ինստիտուցիան ներքոյ . նրա պատուոյ նախագահն էր Շուեդիայի թագաւոր Օսկար II, իսկ հովանաւորն էր աստրիական արհիդուքս Բայնէր Բացման նիստին, որ տեղի ունեցաւ 19ին, կը նախագահէր պ. ժողովի, իսկ փակման նիստը, 26ին, կայացաւ Ֆրանսիայի ժողովրդական լուսաւորութեան միւնիստր Բիէնվընիւ-Մարտէնի նախագահութեամբ :

Կոնգրէսի նախագահ ընտրվեց պ. Բընէ Բասսէ, Ալեքսի Բարձր գրպոցի վերատեսուչը, որ միեւնոյն ժամանակ կարգադիր մասնագիտիչ նախագահն էր :

Զանազան պետութիւններ — Գերմանիան, Աւստրիա-Սլոնգարիան, Բելգիան, Դանիան, Ամերիկայի Միացեալ-Նահանգները, Ֆրանսիան, Հոլանդիա, Անգլիան, Իտալիան, Շուեդը, Ռուսաստանը, Չինաստանը, Եգիպտոսը, Պարսկաստանը ու զարկել էին պաշտօնական պատուիրակներ, Եւրոպայի գրեթէ բոլոր համալսարանները եւ նշանաւոր գիտնական հաստատութիւնները նոյնպէս ուղարկել էին պատգամաւորներ, որոնց մէջ կային նշանաւոր արեւելագէտներ եւ մի քանի հայագէտներ, ինչպէս պ. պ. Բարթիլէ գր. Մէնար, Հուգատ, Սենար, պրոֆէսոր Մէրքս (վերջինս Հայդելբերգի համալսարանի պրոֆէսոր, սա 10 տարուց ի վեր զբաղված է հայերէն Աստուածաշնչի ու ուսմանսիրութեամբ), պրոֆէսոր Կարօլիզէս (Աթէնքի հալաւարանի) եւ ուրիշներ :

Կոնգրէսը բաժանված էր 7 ճիւղերի . I. Հնդկաստան, արիական շնչուններ եւ Հնդկաստանի լեզուներ. այս ճիւղին էր վերաբերում եւ հայագիտութիւնը. սրա նախագահն էր Ֆրանսիական ինստիտուտի անդամ պ. Սէնար : II. Սեմիտական լեզուներ. նախագահն էր Ֆրանսիական ինստիտուտի անդամ պ. Ֆիլիպ Բերթէ III. Մուսուլման լեզուներ (արաբական, թիւրքաց, պարսից, նախագահն էր պ. Ռընէ Բասէ, IV. Եգիպտոս ամփրիկեան լեզուներ . Մադագասկար . V. Մայրազոյն Արեւելքի. նախագահն էր պրոֆէսոր Կորդիէ, VI. Յունաստան եւ Արեւելքի. նախագահն էր պրոֆէսոր Դիւլ . VII. Ամփրիկեան ինքնագիտութիւն եւ մուսուլման արուեստ :

Իբրեւ հայ արեւելագէտ, Կոնգրէսին մասնակցում էր միայն պ. Համբարձում Առաքելեան (Թիֆլիսից) :

Վերոյիշեալ 7 ճիւղերի մէջ կարգաջլիցին մօտ 150 զեկուցումներ եւ բեֆերատներ, որոնց մէջ, իրերեւ մեզ համար աւելի հետաքրքրական, պէտք է արձանագրել հետեւեալները . 1) «Կոմկոմսիան լեզուների ուսումնասիրութիւնը . նրա պատմութիւնը եւ ապագան» — Բեֆերատ Դիրբի . 2) «Դննդեան գրքի ազգագրական պատկերի իմաստը եւ նպատակը» — Հալէվի . 3) «Թիւրք-թաթար-կարաիտ գրականութիւնը» Դանսն . 4) «Ժամանակակից գէորները Պարսկաստանում» — Հ. Առաքելեան . 5) «Արաբ լեզուն եւ նրա ճիւղերը» — Կոմս զը Լանդերգ . 6) «Ղուրանի մի կասկածելի հատուած» — Ֆիշեր . 7) «Թիւրք ցեղի էվոլյուսիոնը Ռուսաստանի մէջ» — Բէշիտ-Մաֆլէտ Բէյ . 8) «Արաբական մամուլը» — Միրանտ . 9) «Մի արաբական ձեռագիր Վրաստանի քրիստոնէութիւնը ընդունելու պատմութեան մասին» — Տիկին Ուգա Լեքեցէվա . 10) «Հայոց գրականութեան ուսումնասիրութեան կարեւորութիւնը արեւելագիտութեան համար» — Հ. Առաքելեան . 11) «Կենդանիների պաշտամունքը նգրպոսի մէջ» — Վիդէմանն . 12) «Աֆրիկայի եկեղեցիները եւ արեւելեան ազգեցութիւնները» — Դեմի . 13) «Պարսկական արուեստը իսլամի մէջ» — Սարր . 14) «Հայ գիցարանութեան մէջ յիշված Յարալէզները . Արայ Գեղեցիկը եւ Սուրբ Սարգիսը» — պրոֆէսոր Կարօլիդէս . 15) «Ունգարիայի մէջ հայկական մի մեծ թանգարան հիմնելու անհրաժեշտութիւնը» — Պօքտոր Անտոն Զէրման :

Բացի գիտնական զեկուցումներից, եզան եւ դասախոսութիւններ կոնգրէսի պաշտօնական նիստերից դուրս, քաղաքապետութեան դահլիճում, օրինակ 1) «Արաբական երաժշտութիւնը» . որի առիթով՝ դասախօսը, Ալեքսեւմ երկար դորձած մի ուսուցիչ եւ հրապարակախօս պ . Բուանե, քննեց եւ հայ եկեղեցական երաժշտութեան մասին . 2) Ուիստադնացութիւնը Մէքկան, խօսեց պ . Բուանե, ցոյց տալով այդ դասախօսութեան մէջ հաճի տիտղոս ստանալու ուխտաւնացութեան յաջորդատը եւ այն կեղեքումները որոնք կատարվում են թիւրքաց իշխանութիւնների եւ շէրիֆի ձեռքով :

Ի պատիւ կոնգրէսիանների տրվեցին բանկէտներ, երեկոյթներ, իսկ Ալեքսիայի ընդհանուր նահանգապետ Ժաննար տուեց իր պալատում մի չքեղ պարահանդէս, որին հրաւիրված էին մօտ 7000 անձինք, որոնց մէջ փայլում էին արաբ շէյխերը իրանց ազգային գոյնզգոյն եւ գեղեցիկ զգեստներով :

Փակման նիստին . որին կը նախագահէր, իսկզէս յիշեցինք, մի նիստը Բիէնվլենիւ-Մարտէն, կոնգրէսը զրադվեց այն հարցով, թէ ո՞ւր գումարել յաջորդ XV կոնգրէսը : Առաջարկութիւն եղաւ գումարել Թիֆլիսի մէջ, բայց կոնգրէսը հաւանութիւն չտուեց այդ առաջարկին . անպատրաստ գտնելով Թիֆլիսը գիտնական համագումարի համար եւ ի նկատի ունենալով Բագուի կոտորածները, Որոշվեց գումարել յաջորդ կոնգրէսը 4 տարուց յետոյ, 1909ին Գոպենհագի մէջ :

Յիշենք եւ այն, որ կօնգրէսի մասնաւոր, ոչ-պաշտօնական նիստին մէջ, մեր հայրենակից պ Հ. Առաքելեան խոսելով Բագուի կոտորածի մասին, հարցմունքներ ուղղեց մուսուլման վարդապետներին եւ գիտնականներին. թէ որոնք են Ղուրանի եւ իսլամ կրօնի վարդապետութեան տաճարապետութիւնները եւ թեւադրութիւնները այդ սոսկալի դէպքի վերաբերմամբ:

Ահա այդ հարցումները.

1) Արդեօք Ղուրանը կը բովանդակէ այլասիրական գաղափարներ:

2) Արդեօք Ղուրանը կը ճանաչէ ուրիշ կրօնները. թէ միայն տանելի կը համարէ նրանց գոյութիւնը:

3) Արդեօք Ղուրանը կը թելադրէ հալածանք ոչ-մուսուլմաններին դէմ, կամ թէ կարգիլէ ֆանատիկոսութիւնը:

Արաբ եւ մուսուլման աստուած սքանները եւ գիտնականները խոստացած են պատասխանել այդ հարցմունքին:

Հ. Ա.



### ՀԱՅԵՐԷՆԱԴԷՏՆ ՅՈՎՀ. ՄԻՔԱՅԷԼ ՇԾԻՏ

Մնած է 'ի նեւէօթթինկ Պաւիերայի մէջ. ինչ յաջորդաբար Բասսաւ, Միւնիխ եւ Վիւրցպուրկ քաղաքներն ուսմունքն աւարտելով, քահանայ ձեռնադրուեցաւ 1867 յունիսի 27ին. բաց 'ի հայերէնէ՝ գիտէր նաեւ արաբական, պարսիկ, ասորի, քաղղէ սրէն եւ եբրայական լեզուները. Լայրցիկի արեւելեան ուսմանց ընկերութեան անդամ էր:

1871ին գերմաներէնի թարգմանեց Բիշլանիտու Մանդակուռայ ճառերը, 1872ին հրատարակեց 'Իրիգոր Լուսաւորչին Յաճախապատում ճառին թարգմանութիւնը. վերջապէս 1900ին 'ի լոյս ընծայեց Եզնկայ Կողբացայն Եղծ աղանդոցը, եւ Թագէտս Առաքելոյն ու Սանդխտոյ Կուսին վարուց պատմութիւնը: Ինքն 1883էն ի վեր ժողովրդապետական պաշտօն կը վարէր 'ի Ֆրոնասթէթթէն Պաւիերայի մէջ, ուր եւ հանգեաւ 'ի Տէր ներկայ տարւոյս յունվար 20ին:

Հանգի՛ստ յաւիտեանական բարեյիշատակ հայասէր գերմանացի եւրիցոն:

Յ. Վ. ՄԻՍՔՃԵԱՆ